

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական տեսչության կողմից 2017 թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների մասին

Հաշվետու ժամանակաշրջանում՝ 2017 թվականի առաջին կիսամյակում, համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ թիվ 1066-Ն որոշմամբ Արենիի, Աղավնաձորի և Վերնաշենի համայնքներում՝ բաժնի հետևողական աշխատանքների արդյունքում կատարվել են համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն՝ ցածրարժեքից - բարձրարժեքի՝ փոփոխության են ներկայացվել 29.9 հա, որից փոփոխվել է խաղողի այգի 20.9հա , պտղատու այգի 9.06 հա, իսկ Գետափի համայնքում փոփոխություն է կատարվել բարձրարժեքից - ցածրարժեքի՝ փոփոխության է ներկայացվել 2.03726հա պտղատու այգին վարելահողի, որոնք էլ կարծածվեն մարզի 2017 թվականի հողային հաշվեկշռում: Այս գործընթացը շարունակվում է:

Միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու 31 առաջարկություններ, որից 23-ին հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն՝ հողերի նպատակային նշանակությունը փոխվել վերաբերյալ, որոնք էլ սահմանված կարգով փոխանցել ենք համայնքի ղեկավարներին, մնացած 8-ը ընթացքի մեջ են:

ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգումներ են կատարվել մարզի 5 համայնքներում, հայտնաբերված թերությունների վերացման համար հստակ ժամկետ է տրվել:

Հետևողական ենք եղել, որպեսզի համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալությամբ տրամադրման աշխատանքները իրականացվեն՝ ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համաձայն ՀՀ կառավարության 14.01.2010 թվականի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ենք ներկայացրել Հերմոնի և Ջերմուկի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարում, որոնք ընթացքի մեջ են, իսկ կառուցապատման իրավունքով Գողթանիկի, Վարդահովիտի, Ջերմուկի և Զառիթափի համայնքներից ներկայացված հողամասերի վերաբերյալ տրվել են դրական եզրակացություններ:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերից առ 1-ը հուլիսի 2017թ օտարվել է 400.06 հա, 81.979600 դրամ.գումարով, վարձակալության է տրամադրվել 5.600հա՝ կնքվել են 42 վարձակալական պայմանագիր:

Բաժինը ստացել է 7-ը քաղաքացիներից դիմումներ, բոլոր դիմումներին օրենքով սահմանված կարգով ընթացք ենք տվել:

Հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական

տեսչության պետ

Մ. Մեսրոպյան